

ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և Ոսկրահնայի արդարադատության նախարարության միջև համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը և Ոսկրահնայի արդարադատության նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ընդունելով երկու երկրների արդարադատության նախարարությունների միջև համագործակցության կարևորությունը,

հաշվի առնելով երկու երկրների միջև գիտական, տեխնիկական, մշակութային և իրավական ոլորտներում համագործակցության դրական փորձը,

ձգտելով հաստատել գործընկերային կապեր երկու պետությունների արդարադատության մարմինների և հիմնարկների միջև,

նպատակ ունենալով առավել ամրապնդել հայ և ոսկրահնացի իրավաբանների միջև փոխըմբռնումն ու բարեկամական համագործակցությունը,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը, հաշվի առնելով իրենց հնարավորությունները, կընդլայնեն համագործակցությունը արդարադատության և իրավունքի բնագավառում՝ հետևյալ ձևերով.

1) Կողմերի արդարադատության հիմնարկների միջև գործընկերային կապերի հաստատում,

2) քրեական, վարչական, տնտեսական, քաղաքացիական իրավունքի և դատավարության բնագավառներում օրինագծերի մշակման, ինչպես նաև այդ օրինագծերի գնահատման գործում փոխադարձ օգնություն,

3) երկու պետությունների արդարադատության մարմինների և հիմնարկների կազմակերպմանը և գործունեությանը ծանոթանալու նպատակով Կողմերի պատվիրակությունների փոխանակում,

4) Կողմերի արդարադատության ոլորտի աշխատողների և մասնագետների մասնագիտական որակավորման հետագա բարձրացման և պատրաստման ուղղությամբ համատեղ միջոցառումների (սեմինարներ, դասախոսություններ, գործնական պարապմունքներ) կազմակերպում և անցկացում՝ փոխադարձության հիման վրա,

5) Կողմերի պետությունների մասնակցությամբ իրավական օգնության մասին բազմակողմ միջազգային պայմանագրերի և այլ պայմանագրերի իրականացման գործում փորձի փոխանակում:

Հոդված 2

Կողմերը կարող են կնքել նաև այլ համաձայնագրեր, որոնք կնպաստեն արդարադատության բնագավառում իրենց միջև համագործակցության զարգացմանը:

Հոդված 3

Կողմերն իրականացնում են տեղեկատվության փոխանակում Կողմերի օրենսդրության և արդարադատության մարմինների ու հիմնարկների կազմակերպման ու գործունեության մասին, փորձի փոխանակում ազգային

իրավական համակարգերի տեղեկատվայնացման բնագավառում, ինչպես նաև՝ այդպիսի տեղեկատվություն պարունակող տեղեկատվական համակարգերի ստեղծման և հանրային կամ էլեկտրոնային կապի հատուկ ուղիներով դեպի այդ համակարգեր մուտքի թույլտվություն կազմակերպելու գործում:

Տեղեկատվության փոխանակումն իրականացվում է Կողմերի ազգային օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 4

Համագործակցության գծով համատեղ միջոցառումները ֆինանսավորելիս Կողմերը, եթե այլ կերպ չպայմանավորվեն, կհետևեն այն սկզբունքին, որի համաձայն իրականացվող միջոցառումների շրջանակներում իր տարածքում կազմակերպական և գտնվելու հետ կապված ծախսերը կրում է ընդունող Կողմը, իսկ միջոցառման վայր մեկնելու և վերադառնալու ծախսերը՝ ուղարկող Կողմը:

Հոդված 5

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ: Փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են արձանագրությամբ, որն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով և հանդիսանում է դրա անբաժանելի մասը:

Սույն Համաձայնագրի գործողության ոլորտին առնչվող հարցերով Կողմերի միջև վեճերն ու տարաձայնությունները կլուծվեն երկկողմ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 6

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ուղիներով վերջին ծանուցումը ստանալու օրվանից:

Համաձայնագրի գործողությունը դադարում է Կողմերից մեկի՝ Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու մտադրության մասին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից վեց ամիս անցնելուց հետո:

Կատարված է Երևան քաղաքում 2006 թվականի հոկտեմբերի 11-ին երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ուկրաիներեն և ռուսերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթները մեկնաբանելիս Կողմերն օգտագործելու են ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2007 թ. հոկտեմբերի 30-ին: